# Արձանագրություն

«Ստեփձոր 1» ՍՊԸ -ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրում «Չքնաղ-1» ՓՀԷԿ-ի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ՇՄԱԳ հաշվետվության 2-րդ հանրային լսման վերաբերյալ

15/08/2025թ.

Հանրային երկրորդ լսումը իրականացվեց Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային լսմանը ներկա էին նախաձեռնող խմբի անդամները, համայնքային աշխատակիցները, շահագրգիռ հանրության ներկայացուցիչներ:

Հանրային լսումը օրենքով սահմանված կարգով բացեց ՇՄՆ փորձաքննական կենտրոնի ներկայացուցիչ Շ.Կարապետյանը, ով մանրամասն ներկայացրեց նախատեսվող գործունեության նկարագիրը, սպասվող ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, հիմնական նախագծի խոցելի հատվածը՝ հողային ռեսուրսների վրա, փիէկի շենքի կառուցման ընթացքում հատման ենթակա 60 ծառերի և փոխհատուցման ենթակա ծառաթփային կազմի քանակի և տեղադիրքի ընտրության վերաբերյալ մանրամասները և համայնքի դրական դիրքորոշումը :

Այնուհետ Նախաձեռնող ընկերության անդամները ներկայացրերցին «Չքնաղ-1» ՓՀԷԿ-ի կառուցման վերաբերյալ տեխնիկական, տնեսական ցուցանիշները, ձկնանցարանների առկայության վերաբերյալ, անիվների լվացման հարթակ ունենալու մանրամասները:

Բնակավայրի ղեկավարը հարց բարձրացրեց արդյոք Որասարի հատվածում լինելու են ծառահատման աշխատանքներ, որին ի պատասխան նախաձեռնողը հստակեցրեց որ ոչ: ՇՄՆ ներկայացուցիչը արձագանքեց որ դերիվացիոն խողովակաշարն ու բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի հենասյուները տեղակայված են թե Հայանտառին պատկանող հողերում, թե ԿԳՄՍ ենթակայությամբ հատուկ պահպանվող հողերում, որտեղ ևս առկա են

ծառաթփային կազմ և ենթակա կլինեն հատման և անհրաժեշտ համաձայնեցումները տվյալ կառույցները նս պետք է տրամադրեն:

հնչեցին հարցեր համայնքի բնակչի կողմից, ով մտահոգված էր գետի ափով առկա վարելահողի և թե գործունեությունը ինչպես է կազմակերպվելու տվյալ հատվածում:

-Ուրասարի ղեկավարի կողմից հստակեցվեց որ ջրագիծը չի անցնելու վարելահողի տարածքով այլ գետից մոտ 3մ հեռավորությամբ:

Ուրասարի ղելավարին հետաքրքրեց մինչև ուր է հասնելու և որ էլ գծին է միանալու ՓՀԷԿի հաղորդալարերը և արդյոք ճանապարհ Կառուցվելու է գետին մոտեցող :

Շահագրգիռ հանրության ներկայացուցիչը հետաքրքրվեց ինչքանով են բնակիչնեչը տեղյակ հանրային լսման իրականացումից, ինչ դիրքորոշում ունեն փիէկի կառուցման վերաբերյալ, ինչ մտավախություններ կան որ հայտնի է ղեկավարին:

-պատասխանվեց որ առաջին հանրային լսումն իրականացվել է բազմամարդ և երկրորդին վարուցանքով պայմանավորված մարդիկ չեն եկել, իսկ բնակիչներին հուզող հարցերը կապված են՝ գետի ջրի քանակի նվազման հետ , կարմրախայտ տեսակի վերացման և սոցիալ տնտեսական աշխատատեղերի ստեղծման հետ:

Գյուղի ոռոգման տարածքների հետ կապված էլ ղեկավարիը հստակեցրեց որ բնակիչները չեն օգտվում գետի ջրերից, քանի որ տնամերձ ունեն մեծ մասը և տեղումների քանակի նվազում չի դիտվել որպեսզի կարիք լինի օգտվել գետից, բացառությամբ այս տարի:

Սոցիալ տնտեսական ուղղությամբ արդեն կա պայմանավորվածություն ընկերության ու բնակավայրի հետ, որ պետք է մշակույթի տան տարածքը պարսպապատվի հայտնեց Ուրասարի ղեկավարը , միաժամանակ շահագրգիռ հանրության ներկայացուցիչը վիճակագրություն ներկայացրեց որ Փիէկերը մեծամասամբ չեն կատարում սոցիալական պարտավորվածությունը:

Շ. Կարապետյանը նշեց որ Ուրասարը հայտնի է Ջրաշուշանների լճով և սոցիալական լուրջ ծրագրեր է պետք կազմել զբոսաշրջությանը հայտնի դարձնելու և համայքնում ակտիվություն մտցնելու համար: Ստեփանավան համայքի ներկայացուցիչը նշեց այն պետական ծրագրերը, որոնք ուղվել են

Ուրասար բնակավայրի զարգացմանը, ներառյալ դեպի լիճ տանող գրունտային ճանապարհի շինարարության նախագծի կազմումը:

Նշվեցին մտավախություններ, որ սոցիալական բաղադրիչի իրավունքից բնակավայրերը հաճախ չեն օգտվում, ոլորտը բաց է, կանոնակարգված չէ համայնքների խոշորացումից հետո:

Ամփոփվեց հանրային լսումը շեշտվեց որ առաջարկությունները և դիտողությունները հաշվի կառնվեն եզրակացության կազմման համար:

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ — Շ.Կարապետյան

«Ստեփձոր 1» ՍՊԸ — Վ.Հարությունյան

«ՍՏԵՓՁՈՐ-1»
«СТЕПДЗОР-1»
«STEPDZOR-1»
02898388